

ներուն, որթին եւ թուզի ծառին միջեւ, ժողովուրդին կողմէ շատ մը խորհրդապաշտ պատմումներու վրայ սեւեռուած, այնպէս որ՝ արքունքի հասնող պատանիները կը զգուշացուին աշնան մուտքերուն անոնց շուքին երկարելէ) օրուան մը մէջ կը ճերմկի...: Փայտուորներ, բեռնորդներ: Կ'անցնինք փուռերու գիծէն: Մարմար շերտերու փողփողուն կոները, այդ փուռերու կտուրէն հազարաւոր լոյսի երանգներ կ'ոլորեն, կը ցրուեն: Անոնց առջին ճամբան պղտոր ալիւր է ամբողջովին: Հարիւրաւոր սակառներ, լեցուն, սպասելով կենդանիներուն:

Թուրքեր, որոնք կէս հացով կամ երկու ափ թեփով կը փոխանակեն կիրի իրենց բեռը, - միակ բերքը սա գեղին: Կը բարեւեմ:

Կ'առնեն իմ բարեւը, անշուշտ քիչիկ մը զարմացած միւսներուն լռութեան: Իրենց մագերուն ու թարթիչներուն եղիամին ընդմէջէն նայուածքը կ'ըլլայ քիչիկ մը թթու: Տարագը, մօրուքը (մեր երկուքին) փաստ են օտարութեան: Ու լայն իր երկրին մէջ, թուրքը օտարը չ'ուզեր ճանչնալ, մինչեւ որ ատոր պէտքը չզգացուի իրեն: Անտրամադիր են բերան բանալու, առանց ստիպողութեան, վասնզի կիրին փոշին կրակի պէս կ'այրէ կոկորդը: Անոնք, մենք չանցած՝ կը դառնան իրենց աշխատանքին, կրացած քարերը գետեղելու պարկերու մէջ:

... Անտա՛ռը:

Անոր էն խորունկ ու ոտքէ բոլորովին հեռու մէկ ծմակին:

Գեղէն փախուստի ընթացքին միտք ինկած սա խրճիթը, ուր այդ եղանակին կը պառկի փորձուած ու ծանօթ հովիւ մը: Խրճիթ չէ, այլ՝ ուղղակի վիմափոր քարայր մը, զոր շատ խիտ թաւուտներ կը պատնիշեն: Հովիւին նախնական խելքը կաղնիի ոստերէ դռնակ մը յարմարցուցած է անոր մուտքին:

Պատահական ընտրութիւն մը չէր, որ կատարած էի այս վայրին վրայ: Կիրին փոշին մինչեւ մէկ քիլոմետր